

Հարցաշար  
Առարկայական օլիմպիադայի  
«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի  
Հանրապետական փուլ-2022  
11-12 -րդ դասարաններ-120 րոպե

№ 1-4

**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

1. **Եկեղեցու ատյանի հյուսիսային կողմում գտնվում է.** (0,5 միավոր)
  - 1) խորանը
  - 2) բեմը
  - 3) մկրտության ավազանը
  - 4) պատարագի սուրբ սեղանը
2. **Սարգիս Ա. Սևանցի կաթողիկոսն Անիում ո՞ր եկեղեցու կառուցումը ձեռնարկեց.** (0,5 միավոր)
  - 1) Ս. Առաքելոց
  - 2) Ս. Հովհաննիսյանց
  - 3) Ս. Գրիգոր Լուսավորիչ
  - 4) Կաթողիկե
3. **Որտե՞ղ է կաթողիկ հայերի ընդհանրական պատրիարքի նստավայրը.** (0,5 միավոր)
  - 1) Զմմառի վանք
  - 2) Բեյրութի Ս. Նշան եկեղեցի
  - 3) Կ.Պոլսի Ս. Երրորդություն եկեղեցի
  - 4) Անթիլիասի Ս. Աստվածածին վանք
4. **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը. «Մկզբում բարի բարքեր, նոր միայն իմաստություն, որովհետև առանց առաջինի չի կարող լինել երկրորդը»:** (0,5 միավոր)
  - 1) Արիստոտել
  - 2) Սենեկա
  - 3) Սոկրատես
  - 4) Պլատոն

№ 5-8

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**  
(1x4= 4 միավոր)

5. **Զինվորները ստիպեցին -----, որ Հիսուսին օգնելու համար բարձրացնի նրա խաչափայտը:** (1 միավոր)
6. **Կ. Պոլսի հայոց պատրիարքների առաջին նստավայրը եղել է Սամաթիայի -----  
---- եկեղեցին:** (1 միավոր)

7. *Ըստ Ծննդոց գրքի՝ Եղեմից սկիզբ առնող չորս զեւերն էին Եփրատը, Տիգրիսը, Գեհոնը և -----*  
 ----- : (1 միավոր)

8. *Գևորգ Ե. Կաթողիկոսը, ականատես լինելով իր ժողովրդի կրած տառապանքներին, ինքն իրեն կոչում է «-----»:* (1 միավոր)

**№ 9-10**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ.**

9. *Կատարել համապատասխանեցում.* (1 միավոր)

1. ապաշխարել
2. նարոտ
3. բաղարջ
4. նավակատիք
5. սկիհ
6. նշխար
7. պատարագ

1	
2	
3	
4	
5	
6	
7	

- ա) նորակառույց կամ վերանորոգված եկեղեցու օծման հանդիսավոր արարողություն
- բ) հաղորդության ժամանակ օգտագործվող կլոր հաց, վրան խաչի պատկերով
- գ) պատարագի ժամանակ օգտագործվող արծաթե կամ ոսկե բաժակ
- դ) առանց թթխմանի պատրաստված հաց
- ե) եկեղեցական արարողություն, որի ժամանակ կատարվում է Հաղորդության խորհուրդը
- զ) եկեղեցական արարողությունների ժամանակ օգտագործվող անուշաբույր հեղուկ, որը պատրաստվում է հատուկ արարողակարգով
- է) զղջալ, խոստովանել գործած մեղքերը և հատուցել
- ը) կարմիր և սպիտակ թելերի հյուսվածք, որն օգտագործվում է մկրտության ժամանակ

10. *Կաթողիկոսի անունը համապատասխանեցնել իր գահակալման տարիներին տեղի ունեցած իրադարձությանը:* (1 միավոր)

- |                                  |                         |
|----------------------------------|-------------------------|
| 1. Հովհաննես Ե. Դրաստիսանակերտցի | 6. Ջաքարիա Ա. Ջագեցի    |
| 2. Գրիգոր Գ. Պահլավունի          | 7. Եփրեմ Ա. Չորագեղցի   |
| 3. Գևորգ Բ. Գառնեցի              | 8. Խաչիկ Ա. Արշարունի   |
| 4. Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի    | 9. Դանիել Ա. Սուրմառեցի |
| 5. Խորեն Ա. Սուրադբեկյան         | 10. Պետրոս Ա. Գետադարձ  |

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	
10	

- ա. Բջնիի եպիսկոպոսության հիմնադրումը
- բ. Կաթողիկոսական աթոռի տեղափոխումն Ադթամար
- գ. «Կառավարիչ Ս. Ժողովի» կամ Սինոդի հրավիրումը

- դ. Աստվածաշնչի հայերեն թագմանության 1500-ամյակի տոնակատարությունը
- ե. Ղարաբաղի մետրոպոլիտության ստեղծումը
- զ. Հայրապետական արժույթի տեղափոխումը Հռոմկլա
- է. Կ.Պոլսի Փոռ պատրիարքի առաջարկի մերժումը
- ը. Հայկական թեմերի հիմնումն Անտիոքում և Կիլիկիայում
- թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական պարբերական «Արարատ» հանդեսի հիմնադրումը
- ժ. Սմբատ I-ի թագադրումը Երազգավորում

**№ 11**

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք**

**11. Հայոց եկեղեցու տոների անվանումները դասավորել ըստ տարվա ընթացքում դրանց տոնման ժամանակագրական հաջորդականության. (1 միավոր)**

- ա. Ս. Հարություն
- բ. Ավետում
- գ. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոն
- դ. Համբարձում
- ե. Ս. Թարգմանչաց տոն
- զ. Ս. Ծնունդ
- է. Խաչվերաց
- ը. Քրիստոսի պայծառակերպության տոն
- թ. Տյառնընդառաջ
- ժ. Վարագա խաչի տոն

1	
2	
3	
4	
5	
6	
7	
8	
9	
10	

**№ 12-13**

**Աշխատանք սկզբնաղբյուրով**

**12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցին: (1 միավոր)**

**«Ճանաչիր ինքդ քեզ և կիմանաս, թե ով է մարդը»:**

**1. Որտե՞ղ է փորագրված եղել այս արտահայտությունը:**

---

**13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: (2 միավոր)**

*«Խելքի չեկած նախկին մծղնե աղանդի բեկորներն են, որոնք դաշնակցելով թլպատված բռնակալների հետ, նրանց սովերագիր և առասպելապատում մատյանների հմուտ օգտագործմամբ՝ համբակներին ներգրավեցին իրենց բազմության մեջ»:*

1. Ո՞ր աշխատությունից է մեջբերված հատվածը: (1 միավոր)

---

2. Ե՞րբ է գահակալել աշխատության հեղինակը: (1 միավոր)

---

### № 14-15

**Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ**

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: (0,5 միավոր)

խոնարհություն, եղբայրասիրություն, արդարամտություն, աշխատասիրություն, ողորմածություն, ժուժկալություն, ողջախոհություն:

---

---

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է սխալ: (0,5 միավոր)

Հակոբ սարկավազ Ղևոնդյան, Բագրատ վարդապետ Թավաքայան, Ներսես վարդապետ Խարախանյան, Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյան, Գրիգոր քահանա Ավագյան, Հակոբ քահանա Սառիկյան, Վարդան քահանա Նալբանդյան

---

---

15.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը. ճիշտ շարքին ավելացնել առնվազն մեկ անվանում: (1 միավոր)

- ա. Խաչակնքում, Մոմավառություն, Խնկարկություն, Երկրպագություն, Տնօրինք, Անդաստան, Գերեզմանօրինք...
- բ. Մոմավառություն, Խնկարկություն, Երկրպագություն, Հաղորդություն, Ջրօրինք, Անդաստան, Խաղողօրինք...
- գ. Խաչակնքում, Մոմավառություն, Խոստովանություն, Ժամերգություն, Հիմնօրինք, Տնօրինք, Հոգեհանգիստ...

---

---

**15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված:**

(1 միավոր)

- ա. Գևորգ Բ. Գառնեցի, Գրիգոր Գ. Պահլավունի, Կիրակոս Ա. Վիրապեցի, Միքայել Ա. Սեբաստացի, Աբրահամ Գ. Կրետացի, Կարապետ Բ. Ուլնեցի...
  - բ. Աբրահամ Գ. Կրետացի, Ներսես Ա. Աշտարակեցի, Մկրտիչ Ա. Վանեցի, Վազգեն Ա. Պալճյան, Խորեն Ա. Մուրադբեկյան, Մատթեոս Բ. Կոստանդնուպոլսեցի...
  - գ. Դանիել Ա. Մուրմառեցի, Եփրեմ Ա. Չորագեղցի, Հովհաննես Ը. Կարբեցի, Ներսես Ե. Աշտարակեցի, Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի, Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի...
- 
- 

**15.3. Ի՞նչ սկզբունքով է կազմված ճիշտ շարքը. ճիշտ շարքին ավելացնել առնվազն մեկ անվանում:**  
(1 միավոր)

- ա. Արտաշատ, Աշտարակ, Դվին, Կարս, Ադվեն, Աշտիշատ, Շահապիվան, Հռոմկլա...
  - բ. Արտաշատ, Սիս, Դվին, Աշտիշատ, Շահապիվան, Հռոմկլա, Ադանա, Սեբաստիա...
  - գ. Արտաշատ, Շուղրի Կարմիր վանք, Դվին, Աշտիշատ, Շահապիվան, Հռոմկլա, Կարս, Բջնի ...
- 
- 

**№ 16**

**Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից (8 x 0,25 = 2 միավոր)**

**16.1**

ա. Ո՞վ է պատկերված նկարում:

բ. Իրավափիլիսոփայական բնույթի ի՞նչ աշխատության հեղինակ է նա:



ա \_\_\_\_\_

բ \_\_\_\_\_

16.2 ա. Ո՞վ է մանրանկարի հեղինակը:

բ. Աստվածաշնչյան ի՞նչ իրադարձություն է պատկերված:



ա \_\_\_\_\_

բ \_\_\_\_\_

16.3 ա. Ո՞ր կաթողիկոսն է պատկերված նկարում:

բ. Ե՞րբ է նա գահակալել:



ա \_\_\_\_\_

բ \_\_\_\_\_

16.4 ա. Ո՞ր կաթողիկոսն է պատկերված նկարում:

բ. Ի՞նչ է փորագրված նրա տապանաքարի վրա:



ա \_\_\_\_\_

բ \_\_\_\_\_

## 17. Շարադրանք

(2 միավոր)

1. Թվարկե՛ք ՀՀ տարածքում գործող Հայոց եկեղեցու թեմերը:  
Ո՞ր թեմի տարածքում է գտնվում ձեր բնակավայրը և ո՞րն է ձեր թեմի առաջնորդանիստ եկեղեցին: Ձեր թեմի տարածքում պատմաճարտարապետական ի՞նչ նշանավոր հուշարձաններ գիտեք:
2. Ե՞րբ և որտե՞ղ են հրավիրվել քրիստոնեական եկեղեցու առաջին երեք տիեզերական ժողովները: Ե՞րբ են տեղի ունեցել քրիստոնեական եկեղեցու առաջին և երկրորդ մեծ բաժանումները, այդ բաժանումներով քրիստոնեության մեջ ի՞նչ հիմնական ուղղություններ ձևավորվեցին:
3. Ներկայացրե՛ք Հայոց եկեղեցու մասնակցությունը Մայիսյան հերոսամարտերին:
4. Ներկայացրե՛ք մշակույթի էթնոպաշտպան դերն ու նշանակությունը: